ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԳԱՂՏՆԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Ղազախստանի Հանրապետության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

Հայաստանի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության միջև արտաքին քաղաքական, ռազմական, տնտեսական, գիտատեխնիկական և այլ համագործակցության ընթացքում օգտագործվող գաղտնի տեղեկությունների, ինչպես նաև համագործակցության ընթացքում ձևավորված գաղտնի տեղեկությունների պահպանությունը և պաշտպանությունն ապահովելու նպատակով,

հաշվի առնելով գաղտնի տեղեկությունների պահպանության և պաշտպանության ապահովման հարցում փոխադարձ շահագրգռվածությունը,

Կողմերի պետությունների օրենսդրություններին համապատասխան,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1
Համաձայնագրում օգտագործվող հասկացությունները

1. Սույն Համաձայնագրում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **գաղտնի տեղեկություններ՝** Հայաստանի Հանրապետության պետական գաղտնիք և (կամ) Ղազախստանի Հանրապետության պետական գաղտնիքներ պարունակող՝ ցանկացած ձևով արտահայտված տեղեկություններ, որոնք պաշտպանվում, պահպանվում և փոխանցվում են Կողմերից յուրաքանչյուրի պետության օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև ձևավորվել են Կողմերի համագործակցության ընթացքում, և որոնց հրապարակումը (տարածումը) կարող է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության և (կամ) Ղազախստանի Հանրապետության անվտանգությանն ու շահերին.

2) **գաղտնի տեղեկությունների կրիչներ (այդ թվում՝ էլեկտրոնային)՝** նյութական օբյեկտներ, այդ թվում՝ նաև ֆիզիկական դաշտեր, որոնցում գաղտնի տեղեկություններն արտացոլվում են տեքստերի, պայմանանշանների,

պատկերների, նկարների, նշանների, ազդանշանների, ձայնագրությունների, տեսագրությունների, տեխնիկական լուծումների և գործընթացների կամ որևէ այլ ձևով, որը հնարավորություն է տալիս դրանք ճանաչել և նույնականացնել.

3) **գաղտնի տեղեկությունների և դրանց կրիչների պահպանության ու պաշտպանության ապահովում՝** Կողմերի պետությունների օրենսդրություններին և սույն Համաձայնագրին համապատասխան՝ իրավական, կազմակերպչական, տեխնիկական, կրիպտոգրաֆիկական, ծրագրային և այլ միջոցների կիրառում, այդ թվում՝ այն դեպքում, երբ իրավասու մարմինը համակարգում է պետական մարմինների և կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների ու իրավաբանական անձանց կողմից ձեռնարկվող՝ գաղտնի տեղեկությունների հրապարակումը (տարածումը) կանխելուն ուղղված ջանքերի և միջոցների կիրառումը.

4) **գաղտնի տեղեկությունների հրապարակում (տարածում)՝** գաղտնի տեղեկություններ հաղորդելը, փոխանցելը, տրամադրելը, ուղարկելը, հրապարակելը կամ ցանկացած այլ եղանակով այն իրավաբանական և ֆիզիկական անձանց մատչելի դարձնելը, որոնց չի տրամադրվել դրանց ծանոթանալու իրավունք.

5) **գաղտնիության դրոշմագիր՝** գաղտնի տեղեկությունների կրիչի վրա ներկայացվող և (կամ) ուղեկցող փաստաթղթերում նշվող վավերապայման, որը վկայում է կրիչի վրա պարունակվող տեղեկությունների գաղտնիության աստիճանի մասին.

6) **գաղտնիության աստիճան՝** ցուցանիշ, որը բնորոշում է գաղտնի տեղեկությունների կարևորությունը, դրանց հրապարակման (տարածման) դեպքում հնարավոր հետևանքները, ինչպես նաև այն միջոցների սահմանումը, որոնք ուղղված են գաղտնի տեղեկությունների պահպանության, պաշտպանության ապահովմանը և դրանց հասանելիության սահմանափակմանը.

7) **գաղտնի տեղեկությունների գաղտնազերծում՝** գաղտնի տեղեկությունների և դրանց կրիչների հրապարակման (տարածման) ու հասանելիության նկատմամբ սահմանափակումների վերացում՝ Կողմերի պետությունների օրենսդրություններին համապատասխան.

8) **գաղտնի տեղեկությունների ոչնչացում՝** գաղտնի տեղեկությունների մասնակի կամ ամբողջական վերականգնման հնարավորության բացառումը երաշխավորող գործընթաց.

9) **լիազորված մարմին՝** պետական մարմին կամ կազմակերպություն, որին Կողմերը լիազորել են իրենց համագործակցության ընթացքում փոխանցվող և (կամ) ձևավորված գաղտնի տեղեկությունները փոխանցել, ստանալ, պահպանել, պաշտպանել և օգտագործել.

10) **իրավասու մարմին՝** Կողմի պետական մարմին, որը պատասխանատու է սույն Համաձայնագրի իրականացման համար.

11) **գաղտնի տեղեկություններին առնչվելու թույլտվություն՝** ֆիզիկական անձի՝ գաղտնի տեղեկությունների հասանելիության իրավունք կամ լիազորված մարմնի՝ գաղտնի տեղեկությունների օգտագործմամբ գործունեություն իրականացնելու իրավունք, որը տրամադրվել է Կողմերի պետությունների օրենսդրություններին համապատասխան.

12) **գաղտնի տեղեկությունների հասանելիության թույլտվություն՝** ֆիզիկական անձի կամ լիազորված մարմնի՝ գաղտնի տեղեկություններին ծանոթանալու և դրանք օգտագործելու իրավունք, որը տրամադրվել է Կողմերի պետությունների օրենսդրություններին համապատասխան.

13) **պայմանագիր՝** Կողմերի լիազորված մարմինների միջև կնքվող պայմանագիր (կոնտրակտ), որի շրջանակներում նախատեսվում է փոխանցել և (կամ) օգտագործել գաղտնի տեղեկությունները, այդ թվում՝ նաև ուսուցման ընթացքում.

14) **երրորդ կողմ՝** սույն Համաձայնագրի Կողմեր չհանդիսացող պետություններ, դրանց կառավարություններ և միջազգային կազմակերպություններ, ինչպես նաև սույն Համաձայնագրի կիրառման ոլորտից դուրս գտնվող պետությունների ֆիզիկական կամ իրավաբանական անձինք:

Հոդված 2
Գաղտնիության աստիճանները

1. Կողմերը հաստատում են, որ գաղտնիության աստիճանները և դրանց համապատասխան գաղտնիության դրոշմագրերը համարժեք են և համապատասխանում են իրենց պետությունների օրենսդրություններով սահմանված գաղտնիության հետևյալ դրոշմագրերին՝

Հայաստանի Հանրապետությունում	Ղազախստանի Հանրապետությունում	Ռուսերեն համարժեքը
«Հատուկ կարևորության»	«Аса маңызды»	«Особой важности»
«Հույժ գաղտնի»	«Өте құпия»	«Совершенно секретно»
«Գաղտնի»	«Құпия»	«Секретно»

2. Սույն հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ ստացող Կողմն ուղարկող Կողմի փոխանցած գաղտնի տեղեկությունները նշում է գաղտնիության այն աստիճանին հավասար գաղտնիության աստիճանով, որն ուղարկող Կողմը

շնորհում է փոխանցվող տեղեկություններին:

Հոդված 3
Իրավասու մարմինները

1. Իրավասու մարմիններն են՝

Հայաստանի Հանրապետության համար՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունը,

Ղազախստանի Հանրապետության համար՝ Ղազախստանի Հանրապետության ազգային անվտանգության կոմիտեն:

2. Իրավասու մարմինները, սույն Համաձայնագրին համապատասխան, միմյանց տեղեկացնում են իրենց պետությունների օրենսդրության մեջ կատարված այն փոփոխությունների մասին, որոնք ազդում են գաղտնի տեղեկությունների պաշտպանության վրա:

3. Իրավասու մարմինների, այդ թվում՝ նրանց անվանումների և գործառույթների փոփոխության դեպքում Կողմերը դիվանագիտական ուղիներով միմյանց անհապաղ ծանուցում են:

Հոդված 4
Գաղտնի տեղեկությունների և դրանց կրիչների պահպանության և պաշտպանության ապահովումը

1. Կողմերը պարտավորվում են՝

1) պաշտպանել և ձեռնարկել այն գաղտնի տեղեկությունների և դրանց կրիչների պահպանությանն ուղղված միջոցները, որոնք փոխանցել է մյուս Կողմը, և (կամ) որոնք ստեղծվել են Կողմերի համագործակցության ընթացքում.

2) չփոխել ստացված գաղտնի տեղեկությունների և դրանց կրիչների գաղտնիության դրոշմագիրը՝ առանց տվյալ տեղեկությունները փոխանցած Կողմի գրավոր համաձայնության.

3) ստացված կամ իրենց համագործակցության ընթացքում ստեղծված տեղեկությունների և դրանց կրիչների նկատմամբ կիրառել պահպանությանն ու պաշտպանությանն ուղղված նույնպիսի միջոցներ, որոնք Կողմերի պետությունների օրենսդրություններով սահմանված կարգով կիրառվում են գաղտնիության նույն աստիճանն ունեցող գաղտնի տեղեկությունների նկատմամբ (սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածին համապատասխան համադրվող).

4) լիազորված մարմինների միջև փոխադարձ համագործակցության ընթացքում փոխանցված կամ ստեղծված գաղտնի տեղեկություններն օգտագործել միայն սույն Համաձայնագրի իրականացման, ինչպես նաև Կողմերի՝ կնքված և հավանության արժանացրած պայմանագրերի կատարման

նպատակով.

5) երրորդ կողմի չտրամադրել և չփոխանցել ստացված, ինչպես նաև համագործակցության ընթացքում ստեղծված գաղտնի տեղեկությունները և դրանց կրիչները՝ առանց մյուս Կողմի նախնական գրավոր համաձայնության:

2. Գաղտնի տեղեկություններին հասանելիություն տրամադրվում է միայն այն անձանց, որոնց դա անհրաժեշտ է սույն Համաձայնագրի շրջանակներում ծառայողական պարտականությունների կատարման համար, և վերջիններիս՝ համապատասխան գաղտնիության աստիճանի գաղտնի տեղեկություններին առնչվելու թույլտվությունն ունենալու դեպքում:

3. Անհրաժեշտության դեպքում պայմանագրերում կարող են ներառվել գաղտնի տեղեկությունների և դրանց կրիչների պահպանության ու պաշտպանության ապահովմանն ուղղված լրացուցիչ պահանջներ:

4. Այն դեպքում, երբ գաղտնի տեղեկություններին և դրանց կրիչներին առնչվելու թույլտվությունը անձանց կամ կազմակերպություններին տրամադրվում է պայմանագրային հիմունքներով, տվյալ անձինք կամ կազմակերպությունները կրում են Կողմերի պետությունների օրենսդրություններին համապատասխան պարտավորություններ:

Հոդված 5
Գաղտնի տեղեկությունների փոխանցումը

1. Պայմանագիր կնքելու դեպքում Կողմերի լիազորված մարմինների փոխգործակցությունն իրականացվում է իրավասու մարմինների համաձայնությամբ և համակարգմամբ:

2. Եթե մի Կողմի լիազորված մարմինը մտադիր է գաղտնի տեղեկությունները փոխանցել մյուս Կողմի լիազորված մարմնին, ապա նախապես հարցում է կատարում իր Կողմի իրավասու մարմնին՝ գաղտնի տեղեկությունների փոխանցման համար գրավոր համաձայնություն ստանալու, ինչպես նաև մյուս Կողմի լիազորված մարմնի՝ գաղտնի տեղեկություններին առնչվելու թույլտվության առկայությունը հաստատելու վերաբերյալ:

3. Մի Կողմի իրավասու մարմինը գաղտնի տեղեկությունների փոխանցմանը համաձայնելու դեպքում հարցում է կատարում մյուս Կողմի իրավասու մարմնին՝ այդ Կողմի լիազորված մարմնի՝ գաղտնի տեղեկություններին առնչվելու թույլտվության առկայությունը գրավոր հաստատելու համար:

4. Գաղտնի տեղեկությունների փոխանցման յուրաքանչյուր դեպքում Կողմերն ընդունում են առանձին որոշում՝ իրենց Կողմի պետության օրենսդրության համապատասխան:

5. Կողմերի լիազորված մարմինների փոխգործակցությունն իրականացվում է իրենց պետությունների օրենսդրության համապատասխան՝ իրավասու մարմիններին ծանուցմամբ:

6. Գաղտնի տեղեկությունների փոխանցումը մի Կողմի պետությունից մյուս Կողմի պետություն կատարվում է դիվանագիտական ուղիներով, սուրհանդակային ծառայության միջոցով կամ այլ՝ Կողմերի իրավասու մարմինների միջև համաձայնեցված միջոցներով՝ Կողմերի պետությունների օրենսդրությունների և այն միջազգային պայմանագրերի համաձայն, որոնց մասնակից են Կողմերի պետությունները: Գաղտնի տեղեկություններ ստանալու մասին Կողմի լիազորված մարմինը գրավոր ծանուցում է մյուս Կողմի լիազորված մարմնին:

7. Գաղտնի տեղեկությունների փոխանցումը կարող է կատարվել նաև էլեկտրոնային եղանակով, Կողմերի իրավասու մարմինների կողմից համաձայնեցված ծածկագրային (կրիպտոգրաֆիկական) միջոցներով:

Հոդված 6
Գաղտնի տեղեկությունների և դրանց կրիչների օգտագործմանը ներկայացվող ընդհանուր պահանջներ

1. Գաղտնի տեղեկությունների ստացված կրիչների վրա լիազորված մարմնի կողմից լրացուցիչ դրվում են սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածին համապատասխան համադրվող գաղտնիության դրոշմագրեր:

Ստացված գաղտնի տեղեկությունները բազմացնելու (տիրաժավորելու), այլ լեզվով թարգմանելու դեպքում գաղտնի տեղեկությունների ստացված կրիչի վրա դրվում է բնօրինակի գաղտնիության դրոշմագրին համապատասխան գաղտնիության դրոշմագիր:

Փոխանցված գաղտնի տեղեկության հիման վրա ձևավորված գաղտնի տեղեկությունների կրիչի վրա դրվում է փոխանցված գաղտնի տեղեկությունների գաղտնիության դրոշմագրից ոչ ցածր գաղտնիության դրոշմագիր:

2. Գաղտնի տեղեկությունների կրիչները հաշվառվում և պահվում են դրանք ստացած լիազորված մարմնում՝ այդ Կողմի պետության օրենսդրության պահանջներին համապատասխան:

3. Գաղտնի տեղեկությունների գաղտնիության աստիճանը և դրանց կրիչի վրա համապատասխան գաղտնիության դրոշմագիրը չեն կարող փոխվել՝ առանց դրանք փոխանցած Կողմի լիազորված մարմնի գրավոր համաձայնության:

Կողմերի համագործակցության ընթացքում ձևավորված գաղտնի տեղեկությունների գաղտնիության աստիճանը սահմանվում կամ փոխվում է

Կողմերի լիազորված մարմինների փոխադարձ համաձայնությամբ:

4. Կողմերի համագործակցության ընթացքում փոխանցված կամ ստեղծված գաղտնի տեղեկությունների գաղտնազերծումը կատարվում է Կողմերի լիազորված մարմինների համաձայնությամբ:

Փոխանցված գաղտնի տեղեկությունների գաղտնիության աստիճանի փոփոխության կամ դրանց գաղտնազերծման վերաբերյալ դրանք փոխանցած Կողմի լիազորված մարմինը հնարավորինս սեղմ ժամկետում գրավոր ծանուցում է մյուս Կողմի լիազորված մարմնին:

5. Գաղտնի տեղեկությունների (դրանց կրիչների) բազմացումը կամ այլ լեզվով թարգմանությունը կատարվում է գաղտնի տեղեկությունները փոխանցած Կողմի լիազորված մարմնի գրավոր թույլտվությամբ:

6. Փոխանցված գաղտնի տեղեկությունների (դրանց կրիչների) ոչնչացումը և (կամ) վերադարձը կատարվում է գաղտնի տեղեկությունները փոխանցած Կողմի լիազորված մարմնի գրավոր համաձայնությամբ:

Գաղտնի տեղեկությունների (դրանց կրիչների) ոչնչացման գործընթացը պետք է ապահովի հետագայում դրանց վերականգնման կամ վերարտադրման անհնարինությունը: Գաղտնի տեղեկությունների (դրանց կրիչների) ոչնչացման մասին գրավոր ծանուցվում է դրանք փոխանցած Կողմի լիազորված մարմինը:

7. Սույն հոդվածով նախատեսված բոլոր գործողություններն իրականացվում են միայն Կողմերի լիազորված մարմինների հետ նախնական համաձայնեցմամբ՝ այդ մասին ծանուցելով իրավասու մարմիններին:

Հոդված 7
Պայմանագրերը

1. Կողմերի լիազորված մարմինների կողմից կնքվող պայմանագրերը պետք է պարունակեն հետևյալ պարտադիր դրույթները.

1) գաղտնի տեղեկությունների ցանկը, որը նախատեսվում է փոխանցել և (կամ) օգտագործել համագործակցության ընթացքում, ինչպես նաև դրանց գաղտնիության աստիճանը.

2) համագործակցության ընթացքում փոխանցվող և (կամ) ձևավորված գաղտնի տեղեկությունների պահպանության և պաշտպանության ապահովման առանձնահատկությունները, դրանց կիրառման պայմանները.

3) գաղտնի տեղեկությունների փոխանցման կարգը (միջոցները և ընթացակարգերը).

4) երրորդ կողմի գաղտնի տեղեկությունների փոխանցման անթույլատրելիությունը.

5) գաղտնի տեղեկությունների հաղորդումը միայն գաղտնի տեղեկություններին առնչվելու համապատասխան ձևի թույլտվության և դրանց ծանոթանալու թույլտվություն ունեցող անձանց՝ պայմանագրով նախատեսված նպատակների իրականացման համար.

6) պայմանագրի շրջանակներում ծագող հնարավոր վեճերի (կոնֆլիկտային իրավիճակների) լուծման և համագործակցության ընթացքում փոխանցվող և (կամ) ձևավորված գաղտնի տեղեկությունների հրապարակման (տարածման) դեպքում հնարավոր վնասի փոխհատուցման կարգը:

Հոդված 8
Իրավասու մարմինների փոխգործակցությունը

1. Կողմերի իրավասու մարմիններն իրենց իրավասության շրջանակներում փոխգործակցում են անմիջականորեն և սույն Համաձայնագրի իրագործման նպատակներով անցկացնում են համատեղ խորհրդակցություններ և խորհրդատվություններ՝ նրանցից մեկի խնդրանքով:

2. Կողմերի իրավասու մարմինները փոխանակում են գաղտնի տեղեկությունների պահպանության և պաշտպանության ապահովման ոլորտի համապատասխան նորմատիվ իրավական ակտերը սույն Համաձայնագրի դրույթների իրագործման համար անհրաժեշտ ծավալով, եթե նշվածը չի հակասում Կողմերի պետությունների օրենսդրությանը, ինչպես նաև՝ եթե բացակայում է Կողմերի իրավասու մարմինների որոշումը դրանք փոխանցելու աննպատակահարմարության վերաբերյալ:

Հոդված 9
Այցեր

1. Մի Կողմի պետության ներկայացուցիչների այցերը, որոնց ընթացքում նախատեսվում է վերջիններիս հասանելիություն մյուս Կողմի գաղտնի տեղեկություններին, կազմակերպվում և իրականացվում են ընդունող Կողմի պետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այդպիսի այցերի թույլտվությունը տրվում է միայն սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածի 2-րդ կետում նշված անձանց:

2. Հնարավոր այցի իրականացման վերաբերյալ գրությունը մի Կողմի իրավասու մարմինն ուղարկում է մյուս Կողմի իրավասու մարմնին ոչ ուշ, քան ենթադրվող այցի ժամկետից մեկ ամիս առաջ:

Ենթադրվող այցի վերաբերյալ գրությունը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

1) ներկայացուցչի (ներկայացուցիչների) ազգանունը և անունը, ծննդյան ամսաթիվն ու վայրը, քաղաքացիությունը, անձնագրի սերիան (համարը).

2) ներկայացուցչի (ներկայացուցիչների) պաշտոնը և այն իրավասու մարմնի անվանումը, որը նա ներկայացնում է.

3) գաղտնի տեղեկություններին առնչվելու համապատասխան ձևի թույլտվության առկայությունը.

4) այցի ենթադրվող ամսաթիվը և տևողությունը.

5) այցի նպատակը, գաղտնի տեղեկություններին վերաբերող քննարկման ենթակա հարցերի ցանկը.

6) այն լիազորված մարմինների անվանումները, որոնց ծրագրվում է այցելել.

7) այն անձանց պաշտոնները, ազգանուններն ու անունները, որոնց հետ ծրագրվում են հանդիպումներ:

3. Մի Կողմի պետության ներկայացուցիչները ծանոթանում են մյուս Կողմի պետության գաղտնի տեղեկությունների հետ աշխատելու կանոններին և պահպանում են դրանք:

Հոդված 10
Համաձայնագրի իրագործման ծախսերը

Կողմերն ինքնուրույն են կրում սույն Համաձայնագրի իրագործման հետ կապված ծախսերը՝ իրենց պետությունների օրենսդրություններին համապատասխան:

Հոդված 11
Գաղտնի տեղեկությունների պահպանության ու պաշտպանության պահանջների խախտումը և վնասի չափերի որոշումը

1. Գաղտնի տեղեկությունների պահպանության և պաշտպանության պահանջների խախտման դեպքում, որը հանգեցրել է սույն Համաձայնագրի շրջանակներում փոխանցված և (կամ) համագործակցության ընթացքում ստեղծված գաղտնի տեղեկությունների հրապարակման (տարածման), այն Կողմի իրավասու կամ լիազորված մարմինը, որի պետության տարածքում կատարվել է խախտումը, այդ մասին անհապաղ տեղեկացնում է մյուս Կողմի իրավասու մարմնին:

Այն Կողմի իրավասու մարմինը, որի պետության տարածքում կատարվել է խախտումը, իր պետության օրենսդրության համապատասխան՝ անհրաժեշտ ուսումնասիրություններ և այլ միջոցառումներ է անցկացնում, որոնց արդյունքների մասին նույնպես տեղեկացնում է մյուս Կողմի իրավասու մարմնին:

2. Գաղտնի տեղեկությունների հրապարակմամբ (տարածմամբ) պատճառված վնասի չափը և փոխհատուցման կարգը որոշվում են Կողմերի պետությունների օրենսդրությունների, այն միջազգային պայմանագրերի համաձայն, որոնց մասնակից են նրանք, ինչպես նաև՝ խորհրդակցությունների ընթացքում:

Հոդված 12
Հարաբերությունը այլ միջազգային պայմանագրերի հետ

Սույն Համաձայնագիրը չի առնչվում Կողմերից յուրաքանչյուրի այն իրավունքներին և պարտավորություններին, որոնք բխում են այլ միջազգային պայմանագրերից, որոնց մասնակիցներն են Կողմերի պետությունները:

Հոդված 13
Վիճելի հարցերի լուծումը

Սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված վեճերը և տարաձայնությունները լուծվում են Կողմերի միջև՝ բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

Մինչև ցանկացած վեճ լուծելը Կողմերը շարունակում են պահպանել սույն Համաձայնագրով նախատեսված իրենց պարտավորությունները:

Հոդված 14
Համաձայնագրում փոփոխությունների և լրացումների կատարումը

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են սույն Համաձայնագրի անբաժանելի մաս կազմող առանձին արձանագրություններով և ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 15-րդ հոդվածով սահմանված կարգով:

Հոդված 15
Համաձայնագրի ուժի մեջ մտնելը և գործողության դադարեցումը

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու ամսաթվից և գործում է անորոշ ժամկետով:

2. Կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին դիվանագիտական ուղիներով մյուս Կողմին ուղարկելով գրավոր ծանուցում: Նման դեպքում սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցվում է նշված ծանուցումն ստանալու ամսաթվից վեց ամիսը լրանալուց հետո:

3. Սույն Համաձայնագրի գործողության դադարեցման դեպքում փոխանցված և (կամ) համագործակցության ընթացքում ձևավորված գաղտնի տեղեկությունների նկատմամբ շարունակում են կիրառվել սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածով նախատեսված պահպանության և պաշտպանության միջոցները՝ մինչև դրանց ոչնչացումը կամ գաղտնազերծումը:

Կատարված է Աստանա քաղաքում 2025 թվականի նոյեմբերի «21» -ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ղազախերեն և ռուսերեն. բոլոր տեքստերը հավասարազոր են: Կողմերը սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման կամ կիրառման առնչությամբ տարաձայնություններ և վեճեր առաջանալու դեպքում անդրադառնում են ռուսերեն տեքստին:

Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից՝	**Ղազախստանի Հանրապետության Կառավարության կողմից՝**

СОГЛАШЕНИЕ

между Правительством Республики Армения и Правительством Республики Казахстан о передаче, использовании, защите и сохранности секретных сведений

Правительство Республики Армения и Правительство Республики Казахстан, далее Стороны,

в целях обеспечения защиты и сохранности секретных сведений, используемых в ходе внешнеполитического, военного, экономического, научно-технического и иного сотрудничества между Республикой Армения и Республикой Казахстан, а также секретных сведений, образовавшихся в процессе сотрудничества,

учитывая взаимную заинтересованность в обеспечении защиты и сохранности секретных сведений, в соответствии с законодательствами государств Сторон,

согласились о нижеследующем:

Статья 1
Понятия, используемые в Соглашении

1. В настоящем Соглашении используются следующие основные понятия:

1) **секретные сведения** — выраженные в любой форме сведения, составляющие государственную тайну Республики Армения и (или) государственные секреты Республики Казахстан, защищаемые, охраняемые и переданные в порядке, установленном законодательством государства каждой из Сторон, а также образовавшиеся в процессе сотрудничества Сторон, разглашение (распространение) которых может нанести ущерб безопасности и интересам Республики Армения и (или) Республики Казахстан;

2) **носители секретных сведений (в том числе электронные)** — материальные объекты, в том числе также физические поля, в которых секретные сведения отображаются в виде текстов, символов, образов, изображений, знаков, сигналов, аудиозаписей, видеозаписей, технических решений и процессов либо в иной форме, позволяющей их распознавать и идентифицировать;

3) **обеспечение защиты и сохранности секретных сведений и их носителей** — принятие в соответствии с законодательствами государств Сторон и настоящим Соглашением правовых, организационных, технических, криптографических, программных и иных мер, в том числе при координации со стороны компетентного органа применение государственными органами и организациями, органами местного самоуправления и юридическими лицами, сил и средств направленных на предотвращение разглашения (распространения) секретных сведений;

4) **разглашение (распространение) секретных сведений** — сообщение, передача, предоставление, пересылка, публикация или доведение секретных сведений любыми другими способами до юридических и физических лиц, которым не предоставлено право ознакомления с ними;

5) **гриф секретности** — реквизит, представляемый на носителе секретных сведений и (или) указываемый в сопроводительной документации, свидетельствующий о степени секретности сведений, содержащихся на носителе;

6) **степень секретности** — показатель, характеризующий важность секретных сведений, возможные последствия в случае их разглашения (распространения), а также определение мер, направленных на обеспечение защиты, сохранности и ограничение доступа к секретным сведениям;

7) **рассекречивание секретных сведений** — снятие ограничений на разглашение (распространение) и доступ к секретным сведениям и их носителям в соответствии с законодательствами государств Сторон;

8) **уничтожение секретных сведений** — процесс, гарантирующий исключение возможности частичного или полного восстановления секретных сведений;

9) **уполномоченный орган** — государственный орган или организация, уполномоченные Сторонами передавать, получать, хранить, защищать и использовать передаваемые и (или) образовавшиеся в процессе сотрудничества Сторон секретные сведения;

10) **компетентный орган** — государственный орган Стороны, ответственный за реализацию настоящего Соглашения;

11) **допуск к секретным сведениям** - право физического лица на доступ к секретным сведениям или право уполномоченного органа на

осуществление деятельности с использованием секретных сведений, предоставленное в соответствии с законодательствами государств Сторон;

12) **разрешение на доступ к секретным сведениям** — право физического лица либо уполномоченного органа на ознакомление и использование секретных сведений, предоставленное в соответствии законодательствами государств Сторон;

13) **договор** — договор (контракт), заключаемый между уполномоченными органами Сторон, в рамках которого предусматривается передача и (или) использование секретных сведений, в том числе и в процессе обучения;

14) **третья сторона** — государства, их правительства и международные организации, которые не являются Сторонами настоящего Соглашения, а также физические или юридические лица государств, находящихся вне сферы применения настоящего Соглашения.

Статья 2
Степени секретности

1. Стороны подтверждают, что степени секретности и соответствующие им грифы секретности эквивалентны и соответствуют следующим грифам секретности, установленным законодательствами их государств:

в Республике Армения	в Республике Казахстан	Эквивалент на русском языке
«Հատուկ կարևորության»	«Аса маңызды»	«Особой важности»
«Հույժ գաղտնի»	«Өте құпия»	«Совершенно секретно»
«Գաղտնի»	«Құпия»	«Секретно»

2. В соответствии с пунктом 1 настоящей статьи Сторона-получатель обозначает секретные сведения, передаваемые Стороной-отправителем, той степенью секретности, равной степени секретности,

которую Сторона- отправитель присваивает передаваемым сведениям.

Статья 3
Компетентные органы

1. Компетентными органами являются:

для Республики Армения - Служба национальной безопасности Республики Армения;

для Республики Казахстан - Комитет национальной безопасности Республики Казахстан.

2. Компетентные органы информируют друг друга об изменениях в законодательстве своих государств, влияющих на защиту секретных сведений в соответствии с настоящим Соглашением.

3. В случае изменения компетентных органов, в том числе их наименований и функций, Стороны незамедлительно уведомляют друг друга по дипломатическим каналам.

Статья 4
Обеспечение защиты и сохранности секретных сведений и их носителей

1. Стороны обязуются:

1) защищать и принять меры по обеспечению сохранности секретных сведений и их носителей, которые переданы другой Стороной и (или) созданы в процессе сотрудничества Сторон;

2) не изменять гриф секретности полученных секретных сведений и их носителей без письменного согласия Стороны, передавшей данные сведения;

3) применять в отношении полученных или созданных в процессе их сотрудничества секретных сведений и их носителей такие же мероприятия по обеспечению защиты и сохранности, которые в установленном законодательствами государств Сторон порядке используются в отношении секретных сведений, имеющих ту же степень секретности (сопоставимую в соответствии со статьей 2 настоящего Соглашения);

4) использовать секретные сведения, которые переданы или созданы в процессе взаимного сотрудничества между уполномоченными органами

только в целях осуществления настоящего Соглашения, а также исполнения заключенных и одобренных Сторонами договоров;

5) не предоставлять и не передавать третьей стороне полученные, а также созданные в процессе сотрудничества секретные сведения и их носители без предварительного письменного согласия другой Стороны.

2. Доступ к секретным сведениям предоставляется только тем лицам, которым он необходим для выполнения служебных обязанностей в рамках реализации настоящего Соглашения и при наличии у них допуска к секретным сведениям соответствующей степени секретности.

3. При необходимости в договоры могут быть включены дополнительные требования, направленные на обеспечение защиты и сохранности секретных сведений и их носителей.

4. В случае, когда лицам или организациям предоставляется разрешение на допуск к секретным сведениям и их носителям на договорных началах, данные лица или организации несут обязательства в соответствии с законодательствами государств Сторон.

Статья 5
Передача секретных сведений

1. В случае заключения договора, взаимодействие уполномоченных органов Сторон осуществляется с согласия компетентных органов и при их координации.

2. Если уполномоченный орган одной Стороны намерен передать секретные сведения уполномоченному органу другой Стороны, то он предварительно запрашивает у компетентного органа своей Стороны письменное согласие на передачу секретных сведений, а также подтверждение наличия разрешения у уполномоченного органа другой Стороны допуска к секретным сведениям.

3. Компетентный орган одной Стороны при согласии на передачу секретных сведений осуществляет запрос в компетентный орган другой Стороны для письменного подтверждения наличия у уполномоченного органа этой другой Стороны разрешения на допуск к секретным сведениям.

4. Решение о передаче секретных сведений принимается Сторонами в каждом отдельном случае в соответствии с законодательством государства их Стороны.

5. Взаимодействие уполномоченных органов Сторон осуществляется в соответствии с законодательством их государств с уведомлением компетентных органов.

6. Передача секретных сведений из государства одной Стороны в государство другой Стороны осуществляется по дипломатическим каналам, фельдъегерской службой либо иными, согласованными между компетентными органами Сторон способами, согласно законодательствам государств Сторон и международным договорам, участниками которых являются их государства. Уполномоченный орган Стороны письменно уведомляет уполномоченный орган другой Стороны о получении секретных сведений.

7. Передача секретных сведений может осуществляться также электронным способом, согласованными компетентными органами Сторон шифровальными (криптографическими) средствами.

Статья 6
Общие требования к обращению с секретными сведениями и их носителями

1. На полученные носители секретных сведений уполномоченным органом дополнительно наносятся грифы секретности, сопоставляемые в соответствии со статьей 2 настоящего Соглашения.

В случаях размножения (тиражирования), перевода на другой язык полученных секретных сведений, на полученном носителе секретных сведений проставляется гриф секретности, соответствующий грифу секретности оригинала.

На носителе секретных сведений, образовавшегося на основе переданной секретной информации, проставляется гриф секретности не ниже грифа секретности переданных секретных сведений.

2. Носители секретных сведений учитываются и хранятся в получившем их уполномоченном органе в соответствии с требованиями законодательства государства его Стороны.

3. Степень секретности секретных сведений и соответствующий гриф секретности на их носителе не могут быть изменены без письменного согласия уполномоченного органа передавшей их Стороны.

Степень секретности секретных сведений, образовавшихся в

процессе сотрудничества Сторон, определяется или изменяется по взаимному согласованию уполномоченных органов Сторон.

4. Рассекречивание переданных либо созданных в процессе сотрудничества секретных сведений осуществляется по согласию уполномоченных органов Сторон.

Об изменении степени секретности переданных секретных сведений или их рассекречивании уполномоченный орган Стороны, их передавший, в возможно кратчайшие сроки письменно уведомляет уполномоченный орган другой Стороны.

5. Размножение и перевод на другой язык секретных сведений (их носителей) осуществляется с письменного согласия уполномоченного органа Стороны, передавшей секретные сведения.

6. Уничтожение и/или возврат переданных секретных сведений (их носителей) осуществляется по письменному разрешению уполномоченного органа Стороны, передавшей секретные сведения.

Процесс уничтожения секретных сведений (их носителей) должен обеспечить невозможность их восстановления и воспроизведения. Об уничтожении секретных сведений (их носителей) письменно уведомляется уполномоченный орган передавшей их Стороны.

7. Все действия, предусмотренные настоящей статьей, осуществляются только по предварительному согласованию уполномоченных органов Сторон с уведомлением компетентных органов.

Статья 7
Договоры

1. Заключаемые уполномоченными органами Сторон договоры должны содержать следующие обязательные положения:

1) перечень секретных сведений, который предполагается передать и (или) использовать в процессе сотрудничества, а также степень их секретности;

2) особенности обеспечения защиты и сохранности передаваемых и (или) образовавшихся в процессе сотрудничества секретных сведений, условия их применения;

3) порядок (средства и процедуры) передачи секретных сведений;

4) недопустимость передачи секретных сведений третьей стороне;

5) сообщение секретных сведений только тем лицам, имеющим соответствующую форму допуска к секретным сведениям и разрешение на ознакомление с ними для осуществления предусмотренных договором целей;

6) порядок разрешения возникающих в рамках договора возможных споров (конфликтных ситуаций) и возмещения возможного ущерба в случае разглашения (распространения) передаваемых и (или) образовавшихся в процессе сотрудничества секретных сведений.

Статья 8
Взаимодействие компетентных органов

1. Компетентные органы Сторон в пределах своей компетенции взаимодействуют непосредственно и в целях реализации настоящего Соглашения проводят совместные совещания и консультации по просьбе одного из них.

2. Компетентные органы Сторон обмениваются соответствующими нормативными правовыми актами в области защиты и обеспечения сохранности секретных сведений в объеме, необходимом для реализации положений настоящего Соглашения, в случаях если указанное не противоречит законодательству государств Сторон, а также отсутствия решения компетентных органов Сторон о нецелесообразности их передачи.

Статья 9
Визиты

1. Визиты представителей государства одной Стороны, предусматривающие их доступ к секретным сведениям другой Стороны, организуются и осуществляются в порядке, установленном законодательством государства принимающей Стороны.

Разрешение на такие посещения дается только лицам, указанным в пункте 2 статьи 4 настоящего Соглашения.

2. Письмо о возможном осуществлении визита компетентный орган одной стороны направляет в компетентный орган другой Стороны не

позднее, чем за один месяц до срока предполагаемого визита.

Письмо о предполагаемом визите должно содержать следующие сведения:

1) фамилию и имя представителя (представителей), дату и место рождения, гражданство, серию (номер паспорта);

2) должность представителя (представителей) и наименование уполномоченного органа, который он представляет;

3) наличие соответствующей формы допуска к секретным сведениям;

4) предполагаемая дата и продолжительность визита;

5) цель визита, перечень относящихся к секретным сведениям вопросов, подлежащих обсуждению;

6) наименования уполномоченных органов, которые планируется посетить;

7) должности, фамилии и имена лиц, с которыми планируются встречи.

3. Представители государства одной Стороны знакомятся с правилами работы с секретными сведениями государства другой Стороны и соблюдают эти правила.

Статья 10
Расходы на реализацию Соглашения

Стороны самостоятельно несут расходы по реализации настоящего Соглашения в соответствии с законодательствами своих государств.

Статья 11
Нарушение требований по обеспечению защиты и сохранности секретных сведений и определение размеров ущерба

1. В случае нарушения требований по обеспечению защиты и сохранности секретных сведений, которое привело к разглашению (распространению) секретных сведений, переданных в рамках настоящего Соглашения и (или) созданных в процессе сотрудничества, компетентный либо уполномоченный орган Стороны на территории государства которого совершено нарушение, незамедлительно информирует об этом

компетентный орган другой Стороны.

Компетентный орган Стороны, на территории государства которого совершено нарушение, в соответствии с законодательством своего государства проводит необходимые расследования и иные мероприятия, о результатах которых также информирует компетентный орган другой Стороны.

2. Размер и порядок возмещения ущерба, нанесенного разглашением (распространением) секретных сведений, определяются в соответствии законодательствами государств Сторон, международными договорами, участниками которых они являются, а также в ходе консультаций.

Статья 12
Отношения с иными международными договорами

Настоящее Соглашение не затрагивает прав и обязательств каждой из Сторон, вытекающих из других международных договоров, участниками которых являются их государства.

Статья 13
Разрешение спорных вопросов

Споры и разногласия по толкованию или применению настоящего Соглашения разрешаются путем переговоров и консультаций между Сторонами.

До урегулирования любых споров Стороны продолжают соблюдать свои обязательства, предусмотренные настоящим Соглашением.

Статья 14
Внесение в Соглашение изменений и дополнений

По взаимному согласию Сторон в настоящее Соглашение могут вносится изменения и дополнения, которые оформляются отдельными протоколами, являющимися неотъемлемой частью настоящего Соглашения и вступающими в силу в порядке, предусмотренном статьей

15 настоящего Соглашения.

Статья 15
Вступление Соглашения в силу и прекращение его действия

1. Настоящее Соглашение вступает в силу с даты получения по дипломатическим каналам последнего письменного уведомления о выполнении Сторонами внутригосударственных процедур, необходимых для его вступления в силу, и действует в течение неопределенного срока.

2. Каждая из Сторон может прекратить действие настоящего Соглашения, направив по дипломатическим каналам письменное уведомление другой Стороне о своем намерении прекратить его действие. В этом случае действие настоящего Соглашения прекращается по истечении шести месяцев с даты получения такого уведомления.

3. В случае прекращения действия настоящего Соглашения в отношении переданной и (или) образовавшихся в процессе сотрудничества секретных сведений продолжают применяться предусмотренные статьей 4 настоящего Соглашения меры по защите и сохранности секретных сведений до их уничтожения либо рассекречивания.

Совершено в городе Астана «21» ноября в 2025 году в двух экземплярах, каждый на армянском, казахском и русском языках, все тексты имеют одинаковую силу. В случае возникновения разногласий и споров по толкованию либо применению положений настоящего Соглашения, Стороны обращаются к тексту на русском языке.

За Правительство
Республики Армения

За Правительство
Республики Казахстан

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2025թ. նոյեմբերի 21-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև գաղտնի տեղեկությունների փոխանցման, օգտագործման, պահպանության և պաշտպանության մասին» համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարության
միջազգային պայմանագրերի և
իրավունքի վարչության պետ

Նելլի Սարոյան